



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2015թ.

N 87 -Ս

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՍԿԵՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԹԲԼՂՈՒ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՋՈՒԱՐ, ՆՈՐ ԷՐՔԵՋ ԵՎ ՉԱՐԵՔՏԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի համայնքի ղեկավարի, Շահումյանի շրջանի Ջուար, Նոր Էրքեջ և Չարեքտար համայնքների ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու և անցկացնելու մասին» N396-Ն և 2015 թվականի հուլիսի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թբլղու համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու և անցկացնելու մասին» N449-Ն որոշումներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերան համայնքի ղեկավարի, Մարտակերտի շրջանի Թբլղու, Շահումյանի շրջանի Ջուար, Նոր Էրքեջ և Չարեքտար համայնքների ավագանու անդամների 2015 թվականի սեպտեմբերի 13-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի և Շահումյանի տարածքային ընտրական հանձնաժողովներին՝

1) Ասկերանի շրջանի Ասկերան համայնքի ավագանու անդամների և Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքի ղեկավարի հերթական ընտրությունները 2015թվականի սեպտեմբերի 13-ին անցկացվելու հանգամանքով պայմանավորված, Ասկերանի շրջանի Ասկերան համայնքի ղեկավարի և Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրությունների կազմակերպման ու քվեարկության արդյունքների ամփոփման լիազորությունները վերապահել համապատասխանաբար Ասկերանի շրջանի Ասկերան համայնքի ավագանու անդամների և Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքի ղեկավարի

հերթական ընտրությունների համար կազմավորվող տեղամասային ընտրական հանձնաժողովներին,

2) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ժամանակացույցով նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը՝ ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ռ. Նազարյանին՝ կազմակերպել սույն որոշումը եռօրյա ժամկետում համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին և պատասխանատու կատարողներին ուղարկելու աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման ընդհանուր վերահսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Արզումանյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերան համայնքի ղեկավարի, Մարտակերտի շրջանի Թբլղու, Շահումյանի շրջանի Զուար, Նոր Էրքեջ և Չարեքտար համայնքների ավագանու անդամների արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Ընտրությունների օրը՝ 13 սեպտեմբերի, 2015 թվական

N	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգիրք)	Կատարման ժամկետը (ներառյալ)՝ 2015թ.	Կատարող(ներ)ը
1	Շահումյանի շրջանի Զուար և Չարեքտար համայնքների ընտրական տեղամասերը կազմավորվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ</i>	Հոդված 145, մաս 7	Մինչև օգոստոսի 24-ը	Ոստիկանություն՝ համայնքի ղեկավարի, տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
2	Շահումյանի շրջանի Զուար և Չարեքտար համայնքների տեղամասային կենտրոնները սահմանվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ</i>	Հոդված 145, մաս 7	Մինչև օգոստոսի 24-ը	Համայնքի ղեկավար
3	Շահումյանի շրջանի Զուար և Չարեքտար համայնքներում ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և այդ տվյալները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <i>երկօրյա ժամկետում</i>	Հոդված 49, մաս 1, կետ 2	Մինչև օգոստոսի 26-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
4	Շահումյանի շրջանի Զուար և Չարեքտար համայնքների ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնում փակցնելու համար տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարին դրանք տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 17 օր առաջ</i>	Հոդված 145, մաս 7	Մինչև օգոստոսի 27-ը	Ոստիկանություն, տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
5	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <i>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 և ոչ ուշ, քան 21 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</i>	Հոդված 131, մաս 1, հոդված 145, մաս 5	Օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 23-ի ժամը 18.00-ն	Թեկնածու կամ թեկնածուի լիազոր ներկայացուցիչ

6	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու համար հայտերը հանձնաժողովի նախագահին են ներկայացվում. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20 և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 42, մաս 2	Օգոստոսի 24-ից մինչև օգոստոսի 26-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ
7	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը կայանում է. հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում	Հոդված 42, մաս 5	Օգոստոսի 25-ից մինչև օգոստոսի 28-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամ
8	Թեկնածուների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 21 և ոչ ուշ, քան 19 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	Հոդված 145, մաս 6	Օգոստոսի 23-ից մինչև օգոստոսի 25-ի ժամը 18.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
9	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է . թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում՝ քվեարկության օրվանից մեկ օր առաջ	Հոդված 18, մաս 1	Օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 11-ի ժամը 24.00-ն	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
10	Ընտրողների թվի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկանք տրամադրվում է. քվեարկության օրվանից տասն օր առաջ և երեք օր առաջ	Հոդված 10, մաս 2	Սեպտեմբերի 3-ին, սեպտեմբերի 10-ին	Ոստիկանություն
11	Քվեարկության օրվանից տասն օր առաջ ընտրողների թվի վերաբերյալ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա քվեաթերթիկները տպագրվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան տասը, և ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 56, մաս 5,6	Սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 10-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
12	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են. քվեարկության օրվանից ոչ շուտ, քան հինգ և ոչ ուշ, քան երեք օր առաջ	Հոդված 57, մաս 3	Սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 10-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
13	Ոստիկանության կողմից կազմվող ընտրողների ցուցակներն (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. քվեարկության օրվանից երկու օր առաջ	Հոդված 10, մաս 3	Սեպտեմբերի 11-ին	Ոստիկանություն
14	Տեղամասային ընտրական հանձնաժողովներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են. քվեարկության նախորդ օրը	Հոդված 56, մաս 7, Հոդված 57, մաս 4	Սեպտեմբերի 12-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով

15	Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի. քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	Հոդված 54, մաս 3	Սեպտեմբերի 12-ին՝ մինչև ժամը 24.00-ն	Համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողով
16	Քվեարկության սկիզբը հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ թույլատրվում է. քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին	Հոդված 62, մաս 1	Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 8.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
17	Քվեարկության ավարտի մասին հայտարարվում և ընտրողների մուտքը քվեարկության սենյակ արգելվում է. քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին	Հոդված 66, մաս 1	Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 20.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
18	Ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակը, գործավարության մատյանը, կնիքը, քվեատուփը և քվեախցիկը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում	Հոդված 69, մաս 9	Մինչև սեպտեմբերի 14-ի ժամը 8.00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
19	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, իսկ բողոք լինելու դեպքում՝ քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը	Հոդված 72, մաս 2, հոդված 141, մաս 1	Մինչև սեպտեմբերի 15-ի ժամը 20.00-ն (բողոք լինելու դեպքում՝ սեպտեմբերի 18-ին)	Տարածքային ընտրական հանձնաժողով
20	Տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ որոշում ընդունվում է. քվեարկության օրվանից հետո՝ հինգ օրվա ընթացքում	Հոդված 72, մաս 8	Մինչև սեպտեմբերի 18-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով
21	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և որոշման օրինակները կենտրոնական ընտրական հանձնաժողով և շրջվարչակազմի ղեկավարին ներկայացվում են. երկօրյա ժամկետում	Հոդված 72, մաս 9, Հոդված 141, մաս 8	Մինչև սեպտեմբերի 20-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ